



ԺԱՐԱԹԱՀԱՆԴԵՍ՝ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Ի Պոլսկարիա Տարեկ. 10, վեցամս. 5 ֆր: ԿԱՆԻՍԻԿ: Արտասահման Տարեկ. 12, վեցամս. 6 ֆր.
Գրութիւնք ետ չեն արուիր: Հասցէ DIRAN PAPAŽIAN YELDIZ TABIA, VARNA BULGARIE

ՄԵԾ ԶԵՂԾՈՒՄ ՄԵՆ ԱԼ

«Այլ առակ լուարուք»

Հետեւեալը «Միութիւն»ի Մարտի թիւէն քաղելով, մեր ընթերցողաց ուշադրութեանը կը յանձնենք: Աս ալ ո՞վ գիտէ ո՞ր ալաբէյֆինէ կուսակցութեան գործունէութեան և կամ թաքուն նպատակներուն արդիւնքն է: Ժամանակը ամեն ինչ պիտի լուծէ հարկաւ:

«1896ին չենք գիտեր ո՞ր կողմէն զրկւումած են Պիրէոնի մաքսը տասը սնտուկ փամփուշտներ Արթուր Սուչեան անուն հայո. մը, որ Աթէնքի և Պիրէոնի մէջ անձանթ է. Մաքսային այն պաշտօնեան» որուն յանձնուած են սնտուկները, բարեացակամութիւն ունեցաւ ազդարարել մեզ (Միութիւնի խմբագրութեան) թէ՛ ապրանքները երկար ժամանակ փընտուռած չըլլալով ըստ օրինի ածուրդի դրուած և արդէն կէսէն աւելի վաճառուած ու մաքսային օրինական սոււրքն ու չորս տարուան վարձքը վճարուելէն յետոյ, մնացեալ 157 տրախմի (100ֆր) դումարը պիտի զրկուի կառաւարութեան սնտուկը: Յարգելի պաշտօնեան աւելցուց թէ այս դրամը փոխանակ կառավարութիւնը գանձելու, դուք աւելի ազբատ էք ձեր ազգը թող գանձէ:

Սնտուկներուն պարունակութիւնը

6 սնտուկները կը պարունակեն 120 հազար հրացանի փամփուշտներ, ծախուած են 901 տրախմի (600 ֆր) յորմէ աւելցած է . . . տրախմի 138

1 Սնտուկը կը պարունակէ 20,000 հրացանի փամփուշտներ, որոնց 16,000ը միայն ծախուած են 138 տրախմի, աւելցած դրամ. . . տրախմի 19. 75
Գումար, . . . 157. 75

3 սնտուկները կը պարունակեն 4,750 վեցհարուածեանի փամփուշտներ, որոնք դեռ ծախուած չեն:

Հայելի. — Տակաւին ինչեր պիտի իմանանք արդեօք, շնորհիւ կարգ մը պարտաճանաչ, խղճահար, ազգասէր և որ աւելին է մաքուր (?) գործիչներու . . . :

ՈՒԹԵՐՈՐԴ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Աշուրնիս լոյս, կուսակցութիւն մըն ալ աւելցաւ. անունն է Առնափուտօ—Հայկական գօմիթէ, որուն նպատակը պիտի ըլլայ անշուշտ առնափութներու հետ համերաշխ գործել . . . թաղէ բլթըն ծախելու, պօզա շինելու և վերջ ի վերջոյ դօզ հէլվասին խաւար տալու: Աստուած իններորդէն պահէ:

ԱՉԳԱՅԻՅԵ

Մշոյառաջ տեղապահ Տ. Բաբգէն վարդապետ Մշոյ մէջ աղջկանց որբանոց մը բանալու արտօնութիւն խնդրած է:

— Ի նպատակ Ազգ. Հիւանդանոցի սարքութեամբ մեծ նուագահանդէսը անցեալ կիրակի իրիկուն տրուեր է Իւնիսն ֆըրանսէզի սրահին մէջ: Սոյն հանդէսին արդիւնքը եղած է 800 Օսմ. ոսկի:

— Օրտուէն կը գրեն թէ, տեղւոյն նորակառոյց ազգային վարժարանին բացումը տեղի ունեցեր է փետր. 20 կիրակի օրը մեծ հանդէսիւ: Շինութեան համար ծախս եղած է 1000 ոսկի, զոր հայթաղթած են Օրտուցի և շրջակայից երկսեռ ազգայինք:

— Պոլսոյ ծանօթ գրագետներէն Մկրտիչ Շահնազար որ բաւական ատենէ ի վեր հիւանդութեամբ կը տառապէր, անցեալ ուրբաթ օրը Գատը գիւղի մէջ մեռեր է:

— Վենետիկի Միթիթարեան միաբանութիւնը կը պատրաստուի սօնել յառաջիկայ 1901 տարւոյ Սեպտ. 8ին (ՆՏ) նոյն միաբանութեան հիմնարկութեան երկհարկւրամեայ յօրելեանը:

ՏԵՂԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈԹՅՈՒՄ

Ժամանակէ մը ի վեր Պուլկարիոյ մէջ տատնական շրջագայող Մշոյ Արքայանք գիւղացի Տ. Երեմի քահանայ ԅովհաննէսեան

Ազգ. Պատրիարքարանի որոշմամբ դադրած է ի քահանայադոմարութենէ թէ ի Պուլկարիա և թէ այլուր, բաց ի իւր հայրենիքէն:

Ծանուցանելով զայս ի գիտութիւն բարեպաշտ ժողովրդեան մերոյ,

Մնամք աղօթարար

Այցելու հովիւ Հայոց Պուլկարիոյ

ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ Ծ. Վ. ՊԱՂԱՅԱՆ

12 մարտ 1900

Վառնա


— Դպրոցասէր ազգային մը տեղւոյս երկսեռ ազգ. վարժարաններուն ելեքտրական մեքենայ մը նուիրեր է, երկու ոսկիի արժողութեամբ:

— Տ. Սարգիս քահանայ Ղարիպեան խմբագրութեանս ալ նամակ մը գրելով կը յայտարարէ թէ իր մասին Յ. Ս. Փափազեանի գրածները ճշմարտութենէ հեռի են:

— Ստացանք «ՇԱՍԻՂ ԿԻՍԱՄԵԱՅ ՀԱՆՂԷՍԻ Ա. ԹԻՐԸ: Տարեկան բաժնեգիննէ Պուլկարիոյ համար 10 ֆ. արտասահման 12 ֆր: Զեռքէ չի ծախուիր: Հասցէն է.


Ռէտաֆսիօն սր յա ուրվիս «Շախիդ»

Բանսիօնա Առնէնիէն, Վառնա:



Ա.Զ.Գ.

«Պառաջիկայ շաբաթէն սկսեալ, երեք շաբաթ, երեքշաբթի և չորեքշաբթի իրիկունները ժամը յուկէսին տեղւոյս պուլկար բողոքականոց եկեղեցւոյն մէջ հայոց համար մասնաւոր ազօթքներ տեղի պիտի ունենան, որոնց մասնակցութեանը հաւատացեալ հայ հաւարակութիւնը սիրով կը հրաւիրուի:



ՎԱՐՊԵՏ ՏՈՒՏՈՒԻ ԽԱՄՐՈՅԸ

«Հայելի» թէ ընկերական և թէ հանրային մոլութիւնները ձաղկելու փրկարար ըսկզբունքին հաւատարիմ, իր 152րդ թուովը պաշտօնական մարմնոյ ուշադրութիւնը հրաւիրեց այն տարածայնութեանց վրայ, որոնք սկսած էին հրապարակիս վրայ լսուել կեանքի զարմամիկ վարպետ տուտուի մը նըկատմամբ:

Այդ կէճէլիքի արտաւոյց վարժապետը մեր այս հրատարակութիւնէն վերին աստիճանի փրկարած, փոխանակ ինքզինքը շահելու, միւսը՝ անձի մը ընկերակցութեամբ խանութէ խանութ պտտելով, — առանց բաջութիւն ունենալու իրենց ստորագրութիւնը գնելու, — կարգ մը անձանց միամիտներու թուղթ մը ստորագրել կուտան, որ կը ձգտի ամբաստանելու մեր թերթը, իբրեւ ընտանիքներու գէմ գրող թերթ մը:

Ամեն անոնք, որոնք խղճմտօրէն հետեւած են Հայելիի չորս բարուան ընթացքին, գիտեն, և ամեն անոնք որոնք կը փափաղին աչքէ անցունել այդ չորս տարուան թերթերը, կրնան հաւաքածոն մեր մօտ գտնել իրենց տրամադրութեան տակ ու տեսնել թէ Հայելին միշտ զգուշանալով անձնականութիւններ վիրաւորելու անախորժ հաճոյքէն, Յասմինէ, Հրաբիր, Էրզնան, Օղիկ ևն, մտացածին անուններու ներքեւ շատ մեծ իրաւունքով ձաղկած է հրապարակի վրայ վստացող մոլութիւնները, որոնք հիւրամենձար ու թոյլատու երկրի մը մէջ իրենց տգեղ կողմերով բնականաբար աւելի պիտի շեշտուէին, եթէ Հայելի խարազանը՝ որչափ որ հնար է, ի կարգ չը հրաւիրէր այգալիսները . . . :

Արե՞ փոյթ, որ Հրաբիր անունը թագուհին, և կամ Ծննդ ցնդածը՝ Կիրակոս անուն անձը կատաղութեամբ կը մագնիսացունէին և Հայելիին ակնարկութիւնները իրենց վրայ առնելով, իբր մոլութեան ապուշ թիփեր, ինքզինքնին կը մատնէին ծանօթ շրջանակի մը մէջ: Կը կրկնենք, ո՞վ է մեղաւորը, երբ Պոլիկոս ըսած ասաննիս, անդին Տիրան մը իր վրան կ'աօնէր և ինքզինքը կը մատնէր իբր հեղինակ ակնարկուած աղտոտ արարքին:

Խամրոցին գալով, եթէ սուտ էին ժողովրդեան մէջ եղած տարածայնութիւնները, որոնց արձագանքը տուաւ Հայելին, ինչո՞ւ ծընողքներ մեր գրելէն առաջ իսկ ածապարեցին իրենց զաւակները քաշել այդ տեղէն և մէկ մասը ազգ. վարժարանին ու մէկ մասն ալ մասնաւոր վարժարաններու յանձնել. կը հարցնենք, եթէ սուտ էին, ինչո՞ւ զինքը ամբաստանող ծնողաց գէմ պատուոյ դատ չը բացաւ, հոգա գնաց ուրիշ գործ մը փնտսելու:

Այդ թուղթը ստորագրող միամիտներն ալ զգացած են արդեօք թէ ինքզինքնին ծանր դրութեան մը մէջ կը գնէին օրէնքի առջեւ, ստորագրելով պարբերութիւն մը, որ յայտնի ու որոշ կերպով մեր կեանքին սպասնալու հանգամանքն ունէր. մոռցածն թէ որ երկրի մէջ կը գտնուին և ի՞նչպէս պիտի կարենային ազատել իրենց օձիքը արդարութեան ձեռքէն:

Եւնք կը շարունակենք մեր ճամբան, նըկատելով որ մոլութիւնը՝ ըլլայ ընկերական ըլլայ հանրային, միշտ ձաղկել պէտք է որ ծարակ չը գտնէ, որչափ ալ վարպետ տուտուին պէս խեղճ ողորմելիներ փորձեր ընեն զմեզ կասեցնելու այդ ճամբէն:

Այնպիսիներուն համար արհամարհանք ունինք մենք ուրիշ ոչինչ:

ՆԱԽԱԿԱՏՈՒԹ

Պ. Ա. Ալթըրարմագեան. — Չեր նամակը ստացանք, բայց բիշ մը ուշ. և արգէն տեղական թերթի մը մէջ հրատարակուած ըլլալուն, հարկ չի տեսնք կրկին հրապարակել:

Տ. Յ. Կ. Ճանկիւլեան. — Չեր զրկած նամակն ալ «Խաչագողներու խմբակի» մասին, միմիայն տեղւոյ անձկութեան պատճառաւ ստիպուած ենք չի հրատարակել: Տեղական միւս թերթերը խօստացած են այսօր իսկ հրատարակել գոյն:

Տ. Խ. Ն. Փ. Պոլիս. — Առանց մեր բովն ունենալու ձեր բուն ստորագրութիւնը, չենք կրնար այն յօդուածը հրատարակել:

ԶԱՆԱԶԱՆՔ



Գանի մը կատար խրատներ

Ա. — Հաւկիթները հաւասար չափով եփելու համար, ծածկեցէք տապակին բերանը :

Բ. — Պղպեղը միշտ ստամոքսին համար գրգռիչ և զօրացուցիչ նկատուած է, թէեւ գոյւարամարս՝ տկար ստամոքսներու համար :

Գ. — Երբ բրինձ եփէք, ջուրին մէջ քիչ մը լիմոն քաւեցէք կամ քացախ դրէք, զայն հատիկ հատիկ պահելու համար :

Դ. — Եթէ ածուխի կրակը մարելու երեւոյթը ունի, դգալ մը աղ նետեցէք վրան, ան պիտի հրահրի և փայլի :

Ե. — Ձեր դանակին բերանը քիչ մը տաքցունելով փուռէն ելած թարմ և տաք հացը կրնաք կտրել այնպէս ինչպէս պիտի կտրէիք օթեկ (պայաթ) հացը :

Զ. — Խոտով շինուած անկողին մը և բարձ մը աւելի լաւ են մանուկին համար, քան աղուամալով բարձ մը և բուրդով անկողին մը :

Է. — Մանածէ դեղնած ժապաւէնները սպիտակցնելու համար, զանոնք սապոն-ջուրի մէջ՝ արեգակին աղդեցութեանը ենթարկելու է :

Մոռացումով կամ անխոհեմութեամբ, կը պատահի յաճախ որ մարդ անբաւականաչափ կերպով պաշտպանուած գտնէ ինքզինքը ցուրտին դէմ : Կրնայ պատահիլ որ ուժգին մարդանքէ մը վերջ քրտնելով պող առնելու երկիւղը լինի ինչպէս ճանապարհորդութեան մը, նոյնպէս պտոյտի առնն : Այդ պահուն պարզ թուղթի թերթ մը կամ լրագիր մը, կրնայ պտղին դէմ աղդու պատնէշ մը կանգնել, երբ կուրծքին եւ կռնակին վրայ տարածուի զգեստին տակէն :

Դարմանը պարզ է ու զինն ալաժան :
ՀԱՄԱՆՍՈՐԱՆ

Պէրլինի մէջ հեծելանիւսի գործարանատէր մը վերջերս հնարեր է տեսակ մը հեծելանիւս, որու անիւներուն երկու կողմերը գտնուած աւելները մինչև 3 կանգուն տարածութեամբ տեղերը կ'աւելն, աւելած փոշիներն ու խուլներն ալ կը լեցուն հեծելանիւսին ետեւը դետեղուած տուփին մէջ : Այս նորահնար հեծելանիւսը սուղ ըլլալուն համար առայժմ չի գործածուիր եղեր Պէրլինի փաշոցներուն համար, բայց բոլոր հարուստ տուներու եւ ապարանքներու մէջ կայ, վայրկեանապէս մաքրելու համար բակերն ու պարտէզները :

(Այս տեսակ աւելի մը մենք հայերս ալ պէտք ունինք, հրապարակէն աւել մաքրելու համար խաչագողներու այն բանակը, որ ինչպէս կը տեսնենք, երթալով մեծնալու վրայ է) :

Կին նաւաստիներ կը գտնուին Պալթիկ ծովու եզերքը բանող մանր նաւերու ու շոգենաւներու մէջ, իսկ Ֆինլանտիոյ, Նորվեգիայի ու Տանիմարքայի եզերքները նաւեր, որոնց բոլոր նաւապետներն ու նաւաստիները կին են :

Կնոջական փրիժառութիւն մը

Անցեալները Լոնտոնի մէջ 25—30 տարեկան կին մը հանրակառք մտնելով նստելէն ետքը կը դիտէ որ դէմը գլտնուող մանկամարդ կին մը ու երիտասարդ մը, որոնց կերպարանքէն կ'երեւար թէ նոր հարս ու փեսայ են, իր վերայ նայելով կը սկսին հեզնական ծիծաղներով խօսիլ : Տիկինը արդուլարդի մասին նորութեան հետեւող դասէն չէր, գլխարկն ու հանդերձները նախորդ տարուան ձեւովն էին, նոր հարսն ու փեսան անոնց վրայ նայելով կը հեզնէին, աչքով ընքուիով դիտողութիւններ

կը նէին: Տիկինը պահ մը կը համբերէ, բայց անոնց շարունակած վարմունքը վերջ կուտայ իր համբերութեան: Ուստի գիտելով որ նոր հարսը ամուսինէն տարիքոտ է, կըսէ անոր.

— Տիկին, հաճեցէք ձեր զաւակին ընել որ ետեւիդ պատուհանը գոցելու շնորհն ընէ, որովհետեւ բաւական ցուրտ կուգայ:

Նոր հարսը յանկարծակի եկած, կը շուարի ու կը հարցնէ.

— Ո՞ր զաւակիս ըսեմ. միթէ ես զաւակ ունիմ:

Տիկինը — (Երիտասարդ ամուսինը ցուցնելով) Այո պարոնը ձեր որդին չէ՞...

Թեթեամբիտ նոր հարսը տիկինը այս խօսքին վրայ ամօթահար, գլխակոբ կը մնայ լուռ ու ախուր:

Ինչ կ'ուզեն ըսեն, կանանց համար տարիքի խնդիրը մահու և կենաց խնդիր կը համարուի, որ հրապարակ գալուն պէս, անոնցմէ թէ՛ ամենէն թեթեւը և թէ՛ ամենէն լուրջը տակնաւորայ կ'ընէ:

Թարգմ.

Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն

ԳԻՆՈՎԻՆ ՀՐՈՒՇԱԿԸ (Հեղինակ)

Շատ մը տիկիներ իրաւամբ միշտ կը գանգատին թէ, էրիկներինն օղի խմելու մէջ չափը կանցնեն, թէեւ այս վերջինները ինքզինքնին արդարացնելու մտքը կը պատասխանեն թէ ցորեկուան չարատանջ յոգնութիւնին մոռնալու համար իրիկունները 5—6 հատ կոնծելու են:

Այս ազդածիական տրամաբանութեան կրթնած, Շամշադրամ աղան ալ սովորութիւն ունէր իրիկունները խառնութիւն գոցածին պէս գինեւոր վազե-

լու, ուր երբեմն չափէն աւելի կը կոնծէր ի վնաս իւր քսակին և առողջութեան:

Անցած օր ալ մէկուն հետ կուտած ըլլալով, թէ՛ բարկութենէն չի ճաթելու և թէ՛ ճեթիկամ ընելու համար սովորականէն քիչ մը կանուխ կը նետէ ինքզինքը Անտոնին գինեւորուն, ուր 5—6 հատ խմեմ ըսելնիքէն խօսքի բռնուելով, հարկը տրամնոց երեք չիչեր կը պարպէ, ու, թէեւ «եղաւ ըլլալիք, օխտան ամբողջացնեմ» կ'ըսէ, բայց գինեպանը «զի քո է կարողութիւն» պատասխանելով ճամբու կը դնէ:

Գիշերուան ժամը ինն է: Շամշադրամ աղան աջ ու ձախ խոտորելով, իյնալով ելլալով գէպի տուն յառաջացած ատենը, նպարավաճառէ մը 250 կրամ քանքն հեղինակի կառնէ ու թաշկինակին մէջ կը դնէ: Տանը մօտ, մութ փողոցէ մը անցած պահուն ոտքը կը սահի կիյնայ, որով ձեռքը բռնած թաշկինակին մէջէն ալ հեղինակի գուրս կիյնայ անկիւն մը կերթայ: Շամշադրամ աղան կրցածին չափ կաշխատի հէլվան գտնելու, ու վերջապէս անոր տեղ քար մը ձեռք ձգելով, թաշկինակին մէջ դրած, տուն կերթայ:

— Գա Սաթէն.

— Ի՞նչ է ան.

— Զօճուխները արթոն են.

— Մեղա՛յ, աս ատեն չօճուխ արթուն կը մնայ. պէքէյէցին պէքէյէցին, չեկար նէ պառկեցան.

— Էյ զարար չունի, սա հէլվան անոնց տուր քի ուտեն.

— Վա՛յ մեղքիս, կէս գիշերին մատ մը մնաց. չօճուխները չեմ արթնցներ:

— Անանկ է նէ դուն քիչ մը կեր տէ անոնց ալ պահէ:

— Տուր նայիմ, ըսելով երբ տիկինը թաշկինակը կը բանայ, քարը կը տեսնայ. «վույ վայ մեղքիս», աս ալ գլուխս եկած չէր. քա աս քարին կտերը ի՞նչ է, հիմա խելքս կը թռցնեմ:

— Խալթ կընեո կոր Սաթէն, օխան
5 զրուշի առի.

— Քա աս քարին կտորին փարա՞տը-
ւիր.

— Պատիհալա քեզի բան մը կու-
տա՞ն. հէլվա է ասիկա:

— Քա ի՞նչ հէլվասի. . . աս ճերմակ
քարին կտորը . . .

— Էրկան մը՛ներ քա՛. քէօշէի պա-
խալէն առի. էյէր թահին հէլվասիին
տեղ ճերմակ զօղ հէլվասի տուեր է նէ՛
զարար չունի. ան ալ հէլվա չէ՞ մի.

— Հէլվա ցաւերու դաս հէմէն մարդ-
չօճուխին ոտքի աւան մը առ՛. ըսեմ նէ
փարա չաւնիմ կըսես, ամա ադ միւսիւ-
պէթ ըրախիին համար կը դտնաս ու ան-
խտար կը ճնկես քի՛. քիթիդ ծարը չի
տեսնալով սօխախին քարը հէլվայի տեղ
տուն կը բերես:

Շամշադրամ աղան որ այլ ևս ոտքի
վրայ կենալու կարողութիւն չունէր,
«ես քեզի հետ վաղը կը տեսնուիմ, հէլ-
վան պահէ՛» ըսաւ ու բաղմոցին վրայ
ինկած անմիջապէս սկսաւ խորդար:

— Գլխուդ վերեւը դնեն աս բերած
հէլվադ, մրմռաց խեղճ կինը ու գնաց
իր տեղը պառկեցաւ:

ԿՍՄԻՏ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Հայրենիքի մէջ ամուսնացած ու
ղաւակներու տէր պարոնին մէկը՝ Ժա-
մանակէ մը ի վեր յոյն տան մէջ իբր
Բաւնսիօնէր կը բնակէր: Օրին մէկը տան
տիրոջը 11 տարեկան աղջկանը հետ սի-
րաբանած միջոցին՝ տանտիրուհին վրայ
կը հասնի, որ սաստկապէս կը յանդի-
մանէ պարոնը, և որուն հետ վերջ ի
վերջոյ կատաղի կռիւ մը ընելու ոտի-
կանութիւնը կը միջամտէ ու պարոնը
բանտ կառաջնորդուի. ուր Ժամանակ
մը ճգնելէ ետքը, բարկամներէ մէկուն

միջամտութեամբը տեղացի թուրքի մը
քանի մը դահեկան տրուելով, անոր ե-
րաշխաւորութեամբը առժամապէս բան-
տէն կ'արձակուի: Շատ կարելի է որ այս-
օր վաղը դատաւարութիւնը տեղի ունե-
նայ ու թերեւ նորէն բանտարկուի մեր
պարոնը, որ աւաղ իր բացակայութեամ-
բը ընտանեացը պատճառած սրտի ցաւ-
ուն վրայ ցաւ մըն ալ պիտի աւելցնէ՝ իր
անոնց խրկելու պարտաւորուած օրապա-
հիկին փոխարէնը հոս փաստաբանի կամ
երաշխաւորներու ձեռքը լինելով:

Յաւելով կըսենք թէ մեր մէջ շատ կան
այս կարգի պարոններ, որոնք հայրե-
նիքի մէջ իրենց ընտանիքն ու զաւակ-
ները լքած, օտար աստղերու տակ աղ-
տոտ վարմունքներով Ժամանակնին կան-
ցունեն:

Ափսոս, ու հաշար ամօթ անանկնե-
րուն:

ՆՈՐԱՅԻ

Ն Կ Ա Ր Հ Ս Ն ՈՒ Կ

Թիւ 152րդ Հայելիի Նկարհանուկը կարգացեր
էին նաև Տիարը Լ. Թորոսեան Լօմարանկալէ.
Յ. Ս. Հինալեան Փ. Պոլսէն. Հ. Յ. Հայթաւան
Պապատաղէ. Տ Տօղրամաճեան Բարիլէ և
Հոյի Բ. Մանչեսդրէ:

Թիւ 153րդ Հայելիի Նկարհանուկը
կարդալ այսպէս.

«Թոյն կայ օձի բերանի մէջ

նախանձոտին աչքի մէջ»:

Կոր անսխալ կարգացին Ա. Շահապեան,
Օր. Չապել Արապեան, Սաֆի Խ. Տամա-
եան, Սիրանոյշ Պաղտատլեան և Գրի-
գոր Մ. Արապեան Վառնայէն. Կ. Յ. Մի-
նասեան Ռաման բաղարէն:

 Տիար Արամ Աղթարեան 'ի
Պուքրէշ. — 1898 հոկտեմբերէ մինչև
1899 սեպտ. վերջ «Հայելի»ի մէկ տա-
րեկան բաժնեդին 12 ֆրանք պարտ-
քերնիդ ալ ևս հասնեցք վճարել:

ՅԱՂԱԿՐԱՏԸ

ՋԱՆԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԱԾԻ

(Շար. անցեալ թիւէն)

Տիկին Լարալիւ տանը գործերը կորագրելէ հտըր, մտածեց սակայն որ ամուսնին գործած ոճրին գաղտնիքը շատ ծանր էր միմիայն իրեն համար: Պէտք էր մէկը բաժնէր զայն: Այս պատճառաւ անմիջապէս գուրս ելաւ և իր դրացուհիներէն մէկուն եղելու թիւնը պատմեց: «Միայն թէ մարդու բան չըսես, պատուիրեց լալով. եթէ երբեք ուրիշ մը իմանալու ըլլայ, բաներնիս բռնած է»:

Այդ դրացուհին երկար տտենէ ի վեր կը ծանշնար հայր Լարալիւն, հեզ և ամենէն յարգուած անձ մը. այս պատճառաւ զարմացած մնաց երբոր իմացաւ թէ անիկա մարդ մը սպաննած է: Բայց հակառակ այս գործին անհաւանականութեան, պարտաւորեցաւ հաւատալու, որովհետեւ նոյն ինքն տիկին Լարալիւ էր պատմողը: Այս դրացուհին ալ թէեւ դէշ կին մը չէր, բայց ծերուկ այգեգործին կնոջը պէս լիզուն կտոր մը երկար էր ու կը սիրէր շաղկրատել: Խոստացաւ իր բարեկամուհիին թէ մարդու բան չպիտի ըսէ. բայց տիկին Լարալիւի հեռանալէն անմիջապէս ետքը գուրս ելաւ եղելու թիւնը պատմեց ուրիշ դրացուհիին մը. այս վերջինն ալ անոր պէս ըրաւ, ու ժամ մը ետքը բովանդակ քաղաքը մեծ յուզման մէջ կը գտնուէր: Ամեն մարդ գիտէր որ հայր Լարալիւ մարդ մը սպաննած ու մարմինը թաղած է: Այգեգործին պատուաւոր անցեալը շուտ մոռցուեցաւ. թշուառական ոճրագործ մը կը նկատէին զայն:

Երբ Իւսկինո՝ ոստիկան գինուորներու տասն նապետը եղելու թիւնը իմացաւ, իսկոյն կանչեց իր գինուորներուն ամենէն տարեցը՝ Լալուան, ու ըսաւ անոր.

— Առ բեղի ծանրակշիտ խնդիր մը. բնաւ մաքէս չէի անցնէր թէ քիւնիի պէս պղտիկ քաղաքի մը մէջ կրնայ մարդասպան մը գրտնուիլ: Պէտք է որ ձի հեծնէք և եղելու թիւնը շուտ մը իմաց տաք Մարտին ընդհանուր ղառախաղութեան: Մինչև այն տտեն ևս ծամէն ոստիկանը հետո անտելով Լարալիւի տունը կերթամ ու կը ձերբակալեմ զայն:

Լալուա ձիուն վրայ նստուելով քառորշաւ

դէպի Մարտն արշաւել պիտաւ. Իւսկին տասն նապետն ալ ծամէն ոստիկանին հետ շիտակ այգեգործին տունը ուղղուեցաւ:

Հայր Լարալիւ դեռ չէր վերագործած: Տիկին Լարալիւ ճաշը կը պատրաստէր, երբ, փոխանակ իր ամուսնին՝ որուն կը սպասէր, տեսաւ որ ոստիկանները ներս կը մտնեն:

Խեղճ կինը բոլորովին տագնուեցաւ:

— Ո՛ր է հայր Լարալիւն, հարցուց տասն նապետը.

— Այս առտու, սովորականին պէս իր այգին մեկնեցաւ աշխատելու, պատասխանեց կինը վերջին ծայր խռոված: Ահաւասիկ իր ճաշը պատրաստուած է, հիմա ո՛ր որ է կու գայ:

— Շատ լաւ, իրեն կը սպասենք:

— Բայց Աստուած իմ. իմ բարի ոստիկաններս, ի՞նչ կ'ուզէք.

— Մայր Լարալիւ ձեզի չի վերաբերիր, իրեն միայն պիտի յայտնենք ամէն բան:

Խեղճ կինը հասկցաւ որ դրացուհին լիզուն չէր բռնած, և թէ ոստիկանները եկած էին իր ամուսնին ձերբակալելու: Սկսաւ գողալ:

Հայր Լարալիւ իր այգիէն կը վերադառնար վերջին ծայր անօթի: Տեսաւ որ լաղմաթիւ մարդիկ խռնուած են իր տանը առջեւ, և իսկոյն գուշակեց եղելու թիւնը: Ծակատը մթափնեցաւ: — Թշուառականը լիզուն չէ՛ կրցած զսպել, միմեջեց ինքնիրեն: Ու գըլուխը ծռեց՝ հետաքրքիրներուն մէջէն անցնելու համար: Ասանկով չկրցաւ տեսնել այն շար նայուածքները որոնք իր վրայ ուղղուած էին: Եւ սակայն լսեց որ կըսէին.

— Ահաւասիկ, ինքն է:

Շուտ մը մտաւ իր տունը, ուր դէմ առ դէմ՝ եկաւ ոստիկաններուն հետ:

Հանեց գլխարկը, ողջունեց տասն նապետը, զարմացած՝ ղինքը հոն գտնելուն, և շատ քաղաքավարութեամբ հարցուց թէ ի՞նչ ծառայութիւն կրնար մատուցանել իրեն:

— Հայր Լարալիւ, ըսաւ տասն նապետը, պէտք է պատասխանէք իմ բոլոր հարցումներու: Քիչ մը առաջ իմացուցին թէ նոյնալի ոճիր մը գործած էք:

Լարալիւ գլուխը ծռեց ու չպատասխանեց:

— Ա՛հ, իմ բարի պարոններս, ազադակեց կինը, իմ Խեղճ մարդս բան մը չէ ըրած, կ'ապահովեմ ձեզ:

Հայր Լարալիւ սոսկալի նայուածք մը ուղղեց իր կնոջը:

— Թշուառակո՞ն կին, լո՛ւէ՛, հրամայեց խուլ ձայնով մը. դուն ես այս ամենուն պատճառը:

Խիղճ կինը թոռի մը վրայ ինկաւ՝ և գըլուխը գոգնոց, և մէջ առաւ հեծկլտանքները խեղդելու համար:

— Հայր Լաբալիւ, ըսաւ տասնապետը հըրամայողական ձայնով մը, պէտք է պատասխանել: Կը խոստովանի՞ք գործած ըլլալ այն ոճիրը որուն համար զձեզ կ'ամբաստանեն: Իրա՞ւ է որ խեղճ փերեզակ մը սպաննած և անոր մարմինը թաղած էք ձեր այգիին մէջ:

— Պարոն տասնապետ, չէք գիտեր...

— Հայր Լաբալիւ, պէտք է կանոնաւոր կերպով պատասխանէք իմ հարցումիս:

— Այո՛, ճշմարիտ է որ խեղճ փերեզակ մը սպաննեցի ու զայն թաղեցի այգիիս մէջ:

Տիկին Լաբալիւ կը հեծկլտար իր գոգնոցին մէջ: Տասնապետը շարունակեց խոստելն.

— Հայր Լաբալիւ, ի՞նչպէս եղաւ որ այս տարիքնուդ մէջ կրցաք ոճրագործ մը ըլլալ:

— Պարոն տասնապետ, կակաջեց այդեւ գործը:

— Պատասխանեցէ՛ր, հայր Լաբալիւ:

— Պարոն տասնապետ, ահաւասիկ եղելու թիւնը. փերեզակը ճամբաս քոցած էր. ուղեցի մէկդի առնել զայն. բայց ինքը սկսաւ զիս ծաղրել: Եւ ես՝ որ սովորաբար այնչափ համբերող եմ, շիտակը բարկացայ ու գործիքովս անանկ սաստիկ հարուած մը տուի գլխուն որ իսկոյն մեռաւ:

— Յետոյ ձեր այգիին մէջ փոս մը բացիք ու հոն թաղեցիք զայն, անանկ չէ՞:

— Այո, պարոն տասնապետ:

— Գործած ոճիրը կը խոստովանի, ըսաւ այս վերջինը իր ոստիկանին: Յետոյ ձեռքը այգեգործին ուսին վրայ դնելով աւելցուց.

— Հայր Լաբալիւ, յանուն օրէնքին կը ձերբակալեմ զձեզ:

Ու մինչդեռ մայր Լաբալիւ յուսահատութենէն մազերը կը փեթտէր ու տունը կը լեցնէր իր մեծածայն աղաղակներով, ուստի կանները դուրս հանեցին ոճրագործը ու բանտ աւաջնորդեցին, իրենց ետեւէն ունենալով ամբողջ որ շարունակ կը պոռար.

— Աւաղակ, թիարան պիտի երթաս:

Նոյն իոկ շատեր կը գոչէին.

— Պիտի գլխատեն զայն:

(Շարունակելի)

ՊԱՏՈՒՀԱՆԻՆ ՄՈՒՐՀԱԿԸ

Թատրերգութիւն 7 արարուած

ՏԻԳՐԱՆ ՄԱՆԱՎԵԱՆ

«Գայլ Վահան» որբերգութեան հանգուցեալ հեղինակին սոյն Բ. երկն ալ կը յանձնարարուի բանասիրաց ուշադրութեանը: Գինն է 1 ֆրանք: Գիմել առ Արամ Մանավեան, բոսթրէսթանթ, Վարնա:

Մ. Զ.

ՀՈՎԱՍՈՒՆ

Սիրուն բանաստեղծութեանց հատորիկ մըն է, ընթերցանութեան արժանի: Գինն է 25 սանդիմ. շատ առնողներու համար չափաւոր զեղչ: Գիմել Զարպհանէլեան գրատուն Վառնա:



Հայկական սրճարան ճաշարան, ընթերցարան, պիլարտո, կլիկակ եղնափոր սիկարներ: Հաստատութիւնը բաց է ամեն օր առաւօտեան ժամ 5էն մինչև 2: Երրորդ Ամիւլ թիւ 388: 28րդ դոփոցին մօտիկ ի նիւ—Եօրք:

ՆՈՐ

Ա. Զ. Մ. Ա. Տ. Ո. Ի. Ն.

Կ. Զ. Ն. Ո. Ր. Ե. Ն. Ի.



Սագալը չէշմէ, աղջկանց կիսաշաղիէի դէմը, Վարնա:

Ոսկեզօծ, կտշեկազմ, լաթակազմ և թղթակազմ եւրոպական ճաշակաւ: Իւրամատչելի գիներ: Կը պատրաստէ նաեւ վաճառականական տոմարներ եւ դպրոցական տետրակներ:

Отговорникъ М. Сконовъ
ВШачрианица „Взтанмоовъ“ —